դեպքում: Կրող ունակության լրացուցիչ ինդեքսի և սույն կանոնակարգի 63-րդ կետի հիման վրա ստացված արագության կատեգորիայի դեպքում բեռնվածության փոփոխությունները գործող չեն.

ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱԽՎԱԾ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՌԱՎՂԱՅԻՆ ԵՎ ԱՆԿՑՈՒՆԱԳԾԱՅԻՆ ԴՈՂԵՐԻ ԿՐՈՂ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Դողերի կրող ունակության փոփոխությունը, %										
արագություն, կմ/ժ	բեռնվածության բոլոր ինդեքսները				բեռնվածության ինդեքսները ≥122		բեռնվածության ինդեքսները ≤121			
	արագության կատեգորիայի նշագիրը				արագության կատեգորիայի նշագիրը		արագության կատեգորիայի նշագիրը			
	F	G	J	K	L	M	L	M	N	P
0	+150	+150	+150	+150	+150	+150	+110	+110	+110	+110
5	+110	+110	+110	+110	+110	+110	+90	+90	+90	+90
10	+80	+80	+80	+80	+80	+80	+75	+75	+75	+75
15	+65	+65	+65	+65	+65	+65	+60	+60	+60	+60
20	+50	+50	+50	+50	+50	+50	+50	+50	+50	+50
25	+35	+35	+35	+35	+35	+35	+42	+42	+42	+42
35	+19	+19	+19	+19	+19	+19	+29	+29	+29	+29
40	+15	+15	+15	+15	+15	+15	+25	+25	+25	+25
45	+13	+13	+13	+13	+13	+13	+22	+22	+22	+22
50	+12	+12	+12	+12	+12	+12	+20	+20	+20	+20
55	+11	+11	+11	+11	+11	+11	+17,5	+17,5	+17,5	+17,5
60	+10	+10	+10	+10	+10	+10	+15,0	+15,0	+15,0	+15,5
65	+7,5	+8,5	+8,5	+8,5	+8,5	+8,5	+13,5	+13,5	+13,5	+13,5
70	+5,0	+7,0	+7,0	+7,0	+7,0	+7,0	+12,5	+12,5	+12,5	+12,5
75	+2,5	+5,5	+5,5	+5,5	+5,5	+5,5	+11,0	+11,0	+11,0	+11,0
80	0	+4,0	+4,0	+4,0	+4,0	+4,0	+10,0	+10,0	+10,0	+10,0
85	-3	+2,0	+3,0	+3,0	+3,0	+3,0	+8,5	+8,5	+8,5	+8,5
90	-6	0	+2,0	+2,0	+2,0	+2,0	+7,5	+7,5	+7,5	+7,5
95	-10	-2,5	+1,0	+1,0	+1,0	+1,0	+6,5	+6,5	+6,5	+6,5
100	-15	-5	0	0	0	0	+5,0	+5,0	+5,0	+5,0
105		-8	-2	0	0	0	+3,75	+3,75	+3,75	+3,75
110		-13	-4	0	0	0	+2,5	+2,5	+2,5	+2,5
115			-7	-3	0	0	+1,25	+1,25	+1,25	+1,25
120			-12	-7	0	0	0	0	0	0
125						0	-2,5	0	0	0
130						0	-5,0	0	0	0
135							-7,5	-2,5	0	0

140							-10	-5	0	0
145								-7,5	-2,5	0
150								-10,0	-5,0	0
155									-7,5	-2,5
160									-10,0	-3,0

41. Սույն տեխնիկական կանոնակարգի 22-րդ աղյուսակում ≥ 122 և ≤ 121 կրող ունակություններով ինդեքսները վերաբերում են միևնույն շահագործման ռեժիմին:

42. Սույն տեխնիկական կանոնակարգի 22-րդ աղյուսակում տրված P նշագրով արագության կատեգորիայի դեպքում 160 կմ/ժ-ից բարձր արագությունների ժամանակ դողերի կրող ունակության փոփոխություններ չի թույլատրվում: Q և բարձր արագության կատեգորիաների համար տվյալ արագության կատեգորիայի նշագրին համապատասխանող նշանակում է տվյալ դողի համար թույլատրելի առավելագույն արագություն:

ՕԴԱՃՆՇԱԿԱՆ ԴՈՂԵՐԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ

43. Պատրաստի համաչափ դողերի երկու կողերի, իսկ ոչ համաչափ դողերի արտաքին կողի վրա պետք է մակնշված լինեն՝

- 1) արտադրողի ապրանքային նշանը և (կամ) անվանումը, գտնվելու վայրը,
- 2) դողի չափերի նշագիրը՝ սույն տեխնիկական կանոնակարգի 22-րդ կետին համապատասխան,
- 3) կառուցվածքը,

1) մարդատար ավտոմեքենաների դողերի համար՝

ա) անկյունագծային կառուցվածքի դողերի համար կարող է մակնշում չպահանջվել կամ տրամագծի նշագրից առաջ կարող է դրվել D տառը,

բ) շառավղային կառուցվածքի դողերի համար տրամագծի մակնշվածքից առաջ նշվում է R տառը և կամ «RADIAL» («ՇԱՌԱՎՂԱՅԻՆ») բառը: 240 կմ/ժ-ից բարձր արագության համար նախատեսված շառավղային կառուցվածքի դողերի համար անվահեցի տրամագծի մակնշվածքից առաջ R տառը կարող է փոխարինվել ZR տառերով,

գ) անկյունագծագոտնորային կառուցվածքի դողերի համար անվահեցի տրամագծից առաջ մակնշում են B տառը և «BIAS BELTED» («ՇԵՂՎԱԾ ԱՆՎԱՀԵՑՈՎ») բառերը,

2) բեռնատար ավտոմեքենաների դողերի համար՝

ա) անկյունագծային կառուցվածքի դողերի համար ցուցումներ կամ D տառը չեն դրվում,

բ) շառավղային կառուցվածքի դողերի համար անվահեցի տրամագծից առաջ նշում են R տառը և «RADIAL» («ՇԱՌԱՎՂԱՅԻՆ») բառը,

4) առևտրային նշանը (դողի մոդելը),

5) արագության կատեգորիայի նշագիրը (նշագրերը)՝

ա) մակնշում են մարդատար ավտոմեքենաների դողերի համար՝ սույն տեխնիկական կանոնակարգի 14-րդ աղյուսակին, իսկ բեռնատար ավտոմեքենաների դողերի համար՝ 15-րդ աղյուսակին համապատասխան:

Մինչև 300 կմ/ժ աշխատանքային բնութագրերով դողերին համապատասխանող 300 կմ/ժ-ից բարձր արագության համար պիտանի մարդատար ավտոմեքենաների դողերի վրա պետք է մակնշել աշխատանքային բնութագրերը (կրող ունակության ինդեքսը և արագության կատեգորիայի նշագիրը): Աշխատանքային բնութագրերը նշում են փակագծում, օրինակ՝ (95Y),

բ) բեռնատար ավտոմեքենաների դողերի վրա նշում են նաև արագության երկրորդ կատեգորիան, եթե ընդունվում է սույն տեխնիկական կանոնակարգի 63-րդ կետի դրույթը,

6) ձմեռային դողերի համար M+S կամ M.S տառերը կամ բոլոր սեզոնների դողերի համար M&S կամ «All seasons» բառերը,

7) կրող ունակության ինդեքսը՝ սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ կամ 35-րդ կետերում տրված սահմանմանը համապատասխան,

8) «TUBELLESS» («ԱՆԽՈՒՑ»), եթե դողերը նախատեսված են կիրառման համար՝ առանց խցիկների,

9) մարդատար ավտոմեքենաների ուժեղացված դողերի դեպքում՝ «REINFORCED» («ՌԻՇԵՂԱՑՎԱԾ») կամ «EXTRA LOAD» («ԲԱՐՁՐ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՄԲ») բառերը,

10) արտադրման թվականը՝ կազմված չորս թվից, որոնցից առաջին երկուսը ցույց են տալիս արտադրման շաբաթը, վերջին երկուսը արտադրման տարեթիվը,

11) բեռնատար ավտոմեքենաների համար նախատեսված՝ վերականգնված դողերի յուրաքանչյուր կողամասի վրա նշված է «v» պայմանական նշանը՝ 20 մմ-ից ոչ պակաս տրամագծով կամ REGROOVABLE («ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ») բառը՝ նշված ռեփեֆային կամ արտաճգմային եղանակով,

12) բեռնատար ավտոմեքենաների փչված դողերի օդի ճնշման վերաբերյալ նշումը, որը պետք է պահպանվի, արագությունից և բեռնվածությունից կախված, կայունության որոշման փորձարկումների ժամանակ՝ կատարված սույն տեխնիկական կանոնակարգի 25-րդ աղյուսակում տրված «PSI» ճնշման ինդեքսի միջոցով,

13) անվահեցի կառուցվածքին համապատասխանող դողերի նշագիրը, եթե այն տարբերվում է ստանդարտ կառուցվածքից,

14) «TWI» նշանը, որը ցույց է տալիս պահպանաշերտի ուսային տարածքում մաշվածության ցուցիչի գետեղման տեղը,

15) դողերի հավասարակշռման նշանը (մարդատար և թեթև բեռնատար ավտոմեքենաների համար),

16) պտտման ուղղվածության նշանը (պահպանաշերտի նկարների ուղղվածության դեպքում),

17) «All steel» («Ամբողջապողպատահենքային») բառը ամբողջապողպատահենքային դողերի համար:

44. Դողերի վրա պետք է նախատեսված լինի ազատ տեղ՝ տիպի պաշտոնական հաստատման նշանի մակնշման համար: Տիպի պաշտոնական հաստատման նշանի ձևը պետք է համապատասխանի «Միօրինակ կարգադրագրեր՝ մարդատար ավտոմեքենաների և դրանց կցանքների դողերի պաշտոնական հաստատման համար» ԵԷԿ ՕՕՆ N 30 կամ «Միօրինակ կարգադրագրեր՝ բեռնատար ավտոմեքենաների և դրանց կցանքների դողերի պաշտոնական հաստատման համար» ԵԷԿ ՕՕՆ N 54 կանոններով սահմանված պահանջներին:

45. Սույն տեխնիկական կանոնակարգի 43-րդ կետի և տիպի պաշտոնական հաստատման նշանի (44-րդ կետ) մակնշումը դողերի վրա պետք է իրականացվի ռեփեֆային կամ արտաճգմային ձևով:

46. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին՝ դողերի համապատասխանության հավաստման արդյունքների հիման վրա համապատասխանության նշանը կարող է մակնշվել սույն տեխնիկական կանոնակարգի 70-րդ կետով սահմանված պահանջին համապատասխան:

47. Թույլատրվում է, 43-րդ կետում նշված մակագրություններից բացի, կատարել լրացուցիչ մակնշվածքներ՝ սպառողների համաձայնության դեպքում:

ՕԴԱՃՆՇԱԿԱՆ ԴՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

48. Դողերի պրոֆիլի լայնությունը՝

1) դողերի պրոֆիլի լայնությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով՝

$$S=S_1+K(A-A_1),$$

որտեղ՝

S-ն պրոֆիլի լայնությունն է (մմ)՝ չափված չափման անվահեցի վրա,

S₁-ը պրոֆիլի անվանական լայնության չափն է (մմ)՝ նշված կարգադրագրին համապատասխան դողերի կողամասերի վրա տրված նշագրում,

A-ն չափման անվահեցի լայնությունն է, մմ, արտադրող կազմակերպության կողմից նշված տեխնիկական նկարագրում:

Եթե պայմանական թիվը տրված է պայմանական միավորներով (դյույմերով), ապա այն բազմապատկում են 25,4 թվով՝ վերածելով միլիմետրերի,

A₁-ը տեսական անվահեցի լայնությունն է (մմ):

A₁-ի համար կիրառում են S₁ արժեքը՝ բազմապատկած արտադրող կազմակերպության կողմից սահմանված x գործակցով, իսկ K-ի համար՝ 0,4 արժեքը,

2) դողերի այն տիպերի համար, որոնց նշագրերը տրված են սույն տեխնիկական կանոնակարգի 1-12-րդ աղյուսակների առաջին սյունակներում, պրոֆիլի լայնությունները պետք է համապատասխանեն դողերի տիպի նշագրերի դիմաց նշված տվյալներին:

49. Դողերի արտաքին տրամագիծը՝

1) դողերի արտաքին տրամագիծը հաշվարկում են հետևյալ բանաձևով՝

$$D=d+2H,$$

որտեղ՝

D-ն արտաքին տրամագիծն է (մմ),

d-ն՝ պայմանական թիվը՝ սույն տեխնիկական կանոնակարգի 22-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերին համապատասխան:

Եթե պայմանական թիվը տրված է պայմանական միավորներով, ապա այն բազմապատկում են 25,4 թվով՝ վերածելով միլիմետրերի:

S₁-ը անվանական պրոֆիլի լայնությունն է (մմ),

H-ը պրոֆիլի անվանական բարձրությունն է (մմ), որը հավասար է S₁ x 0,01 R₁,

R₁-ն պրոֆիլի անվանական բարձրության հարաբերությունն է իր լայնությանը:

Այս բոլոր մեծությունները պետք է համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգի 43-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան դողերի կողամասերում տրված չափերի նշագրին,

2) դողերի այն տիպերի համար, որոնց նշագրերը տրված են սույն տեխնիկական կանոնակարգի 1-12-րդ աղյուսակների առաջին սյունակում, արտաքին տրամագիծը պետք է համապատասխանի դողերի տիպի նշագրերի դիմաց նշված տվյալներին:

50. Դողերի չափումը կատարում են սույն տեխնիկական կանոնակարգի 51-52-րդ կետերով կամ «Դողեր՝ օդաճնշական. Հիմնական չափերի որոշման մեթոդ» ԳՕՍՏ 26000 ստանդարտով

սահմանված մեթոդներով:

51. Մարդատար ավտոմեքենաների դողերը տեղադրում են արտադրող կազմակերպության կողմից դողի տիպի պաշտոնական հաստատման ժամանակ ներկայացված չափման անվահեցի վրա և փչում 3-ից մինչև 3,5 բար ճնշմամբ.

- 1) ճնշումը կարգավորում են մինչև հետևյալ արժեքները`
- ա) անկյունագծագոտևորային կառուցվածքի ստանդարտ դողերի համար` 1,7 բար,
- բ) անկյունագծային կառուցվածքի դողերի համար` ըստ 23-րդ աղյուսակի.

Աղյուսակ 23

ԱՆԿՑՈՒՆԱԳԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԴՈՂԵՐԻ ՃՆՇՈՒՄՆ ԸՍՏ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ

Շերտավորման նորմը	Ճնշումը, բար		
	արագության կատեգորիան		
	L, M, N	P, Q, R, S	T, U, H, V
4	1,7	2,0	-
6	2,1	2,4	2,6
8	2,5	2,8	3,0

- գ) շառավղային կառուցվածքի ստանդարտ դողերի համար` 1,3 բար,
- դ) հզորացված դողերի համար` 2,3 բար,
- ե) ժամանակավոր օգտագործման տիպի «T» պահուստային դողերի համար` 4,2 բար,
- 2) անվահեցի վրա տեղադրված դողը պահում են սենյակային ջերմաստիճանում` 24 Ժ-ից ոչ պակաս, որտեղ կատարվում են փորձարկումներ` բացառությամբ այն դեպքի, որը նախատեսված է սույն տեխնիկական կանոնակարգի 61-րդ կետում,
- 3) կարգավորում են ճնշումը` սույն կետի 1-ին ենթակետում տրված արժեքներին համապատասխան,
- 4) հաշվի առնելով պահպանաշերտի ելուստները կամ շերտերը` կարկինով չափում են դողերի եզրաչափային լայնությունը` դասավորված հավասարաչափ, վեց կետում: Եզրաչափային լայնությունն ընդունում են չափվող արժեքներից առավելագույնը,
- 5) որոշում են արտաքին տրամագիծը` չափելով շրջանագծի առավելագույն երկարությունը` այն բաժանելով π (3,1416) թվի վրա:

52. Բեռնատար ավտոմեքենաների դողերը տեղադրում են արտադրող կազմակերպության կողմից պաշտոնական հաստատման ժամանակ ներկայացված չափման անվահեցի վրա և փչում են մինչև արտադրող կազմակերպության կողմից սահմանված չափումներ կատարելու համար անհրաժեշտ ճնշումը:

Դողը, տեղադրված անվահեցի վրա, պահում են սենյակային ջերմաստիճանում` 24 Ժ-ից ոչ պակաս:

Կարգավորում են ճնշումը` արտադրող կազմակերպության կողմից սահմանված արժեքներին համապատասխան:

Կատարում են 51-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված գործողությունները:

53. Մարդատար ավտոմեքենաների դողերի եզրաչափային լայնությունը կարող է լինել սույն

տեխնիկական կանոնակարգի 48-րդ կետով որոշված պրոֆիլի լայնությունից փոքր, այն կարող է գերազանցել այդ արժեքը 6%-ով՝ անկյունագծային դողերի դեպքում, 4%-ով՝ շառավղային դողերի դեպքում, բացի դրանից, եթե դողերն ունեն հատուկ պաշտպանիչ կողեր (կամ գոտիներ), ապա այդ շեղումների կիրառմանը համապատասխան արժեքները կարող են գերազանցել 8 մմ:

54. Բեռնատար ավտոմեքենաների շառավղային կառուցվածքի դողերի եզրաչափային լայնությունը կարող է լինել սույն տեխնիկական կանոնակարգի 48-րդ կետով որոշված պրոֆիլի լայնությունից փոքր, այն կարող է գերազանցել այդ արժեքը շառավղային կառուցվածքի դողերի համար՝ 4%-ով, իսկ անկյունագծային (անկյունագծագոտնորային) կառուցվածքի դողերի համար՝ 8%-ով: Երկտակ անիվների համար նախատեսված 305 մմ գերազանցող պրոֆիլի լայնությամբ շառավղային կառուցվածքով դողերի համար այն չպետք է գերազանցի 2%-ով կամ անկյունագծային (անկյունագծահյուսվածքային) կառուցվածքի դողերի համար՝ 4%-ով:

55. Դողերի արտաքին տրամագիծը պետք է լինի D_{min} և D_{max} մեծությունների սահմաններում, որոնք որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$D_{min}=d+(2Hxa),$$

$$D_{max}=d+(2Hxb),$$

որտեղ՝

սույն տեխնիկական կանոնակարգի 1-12-րդ աղյուսակում տրված չափերի համար $H=0,5(D-d)$, այլ չափերի համար, որոնք տրված չեն աղյուսակներում, H և d որոշում են 49-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան,

a և b գործակիցները համապատասխանաբար հավասար են՝

1) $a = 0,97$,

2) «b» գործակիցը մարդատար ավտոմեքենաների սովորական (ճանապարհային) տիպի՝

ա) շառավղային կառուցվածքի դողերի համար՝ 1,04,

բ) անկյունագծային (անկյունագծագոտնորման) կառուցվածքի դողերի համար՝ 1,08,

3) «b» գործակիցը բեռնատար ավտոմեքենաների դողերի համար, տրված է 24-րդ աղյուսակում.

Աղյուսակ 24

ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԴՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻՑ ԿԱՌՎԱԾ «B» ԳՈՐԾԱԿԻՑԸ

Դողի օգտագործման կատեգորիան	Կառուցվածքը	
	շառավղային	անկյունագծային
Սովորական	1,04	1,07
Հատուկ	1,06	1,09

4) ձմեռային դողերի եզրաչափային տրամագիծը՝ D_{max} , եթե որոշված է վերը նշված բանաձևին համապատասխան, ապա այն կարող է գերազանցել 1%-ով:

56. Դողի յուրաքանչյուր տիպ, կախված արագությունից և բեռնվածությունից, պետք է անցնի ամենաքիչը մեկ ամրության փորձարկում՝ սույն տեխնիկական կանոնակարգի 57-59-րդ կետերով սահմանված մեթոդով:

Այն մարդատար ավտոմեքենաների դողերը, որոնց չափերի նշագրերից առաջ մակնշված է ZR տառերը, որոնք պիտանի են 300 կմ/ժ ավելի արագության համար, ապա արագության և բեռնվածության փորձարկումները կատարում են մեկ դողի վրա՝ հաշվի առնելով այն արագությունը և բեռնվածությունը, որոնք տրված են դողի նշագրում: Միաժամանակ փորձարկումը կատարում են նույն տիպի երկրորդ նմուշի դողի վրա, այդ դեպքում ընտրում են արտադրող կազմակերպության կողմից դողի տեխնիկական նկարագրում տրված առավելագույն արագությունը և բեռնվածությունը: Երկրորդ դողի վրա կատարվող փորձարկումները կարող են իրականացվել առաջինի վրա, եթե այն թույլատրված է արտադրող կազմակերպության կողմից:

57. Արագությունից և բեռնվածությունից կախված՝ մարդատար ավտոմեքենաների դողերի ամրության փորձարկումներ՝

1) նոր դողերը տեղադրում են արտադրող կազմակերպության կողմից դողերի տիպերի պաշտոնական հաստատման ժամանակ ներկայացված չափման անվահեցի վրա,

2) փչում են դողերը՝ մինչև 25-րդ աղյուսակում տրված համապատասխան ճնշումը (բար), իսկ ժամանակավոր օգտագործման T տիպի պահուստային դողերի համար՝ մինչև 4,2 բար.

Աղյուսակ 25

ԴՈՂԵՐԻ ՃՆՇՈՒՄՆ ԸՍՏ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ

Արագության կատեգորիան	Անկյունագծային դողերը			Շառավղային դողերը		Անկյունագծային գոտևորային դողերը
	շերտավորման նորմ			ստանդարտ	ուժեղացված	ստանդարտ
	4	6	8			
L, M, N	2,3	2,7	3,0	-	-	-
P, Q, R, S	2,6	3,0	3,3	2,6	3,0	2,6
T, U, H	2,8	3,2	3,5	2,8	3,2	2,8
V	3,0	3,4	3,7	3,0	3,4	-
W	-	-	-	3,2	-	-
W և Y	-	-	-	-	3,6	-

3) արտադրող կազմակերպությունը կարող է պահանջել սույն կետի 2-րդ ենթակետում տրված արժեքներից տարբերվող ճնշման օգտագործում՝ հիմնավորելով իր պահանջը: Այդ դեպքում դողերը պետք է լինեն փչված՝ մինչև այդ ճնշումը,

4) անվահեցի վրա տեղադրված դողը պահել սենյակային ջերմաստիճանում, որտեղ կատարվում է փորձարկումը՝ 3 ժ-ից ոչ պակաս,

5) դողերի ճնշումը կարգավորել մինչև սույն կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետով սահմանված ճնշումը,

6) անվահեցի վրա ամրացված դողը տեղադրում են փորձարկման առանցքի վրա և սեղմում են այն (1,70±1%) մ կամ (2,00±1%) մ տրամագծով հարթ թափանիվի արտաքին մակերևույթին,

7) փորձարկման առանցքին տալիս են առավելագույն բեռնվածության գործակցի 80%-ին հավասար բեռնվածություն՝ դողերի կրող ունակության ինդեքսներին համապատասխան՝

ա) L-H՝ ներառյալ արագության կատեգորիաները,

բ) 240 կմ/ժ առավելագույն արագության հետ կապված V արագության կատեգորիայի դողերի համար՝ սույն տեխնիկական կանոնակարգի 39-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան,

զ) 270 կմ/ժ առավելագույն արագության համապատասխան W արագության կատեգորիայի դողերի համար՝ սույն տեխնիկական կանոնակարգի 39-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան,

ը) 300 կմ/ժ առավելագույն արագության հետ կապված Y արագության կատեգորիայի դողերի համար՝ սույն տեխնիկական կանոնակարգի 39-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան,

8) փորձարկումների ընթացքում դողերում ճնշումը չպետք է կարգավորվի, և փորձարկման բեռնվածությունը պետք է մնա անփոփոխ,

9) փորձարկումների ժամանակ սենյակային ջերմաստիճանը, որտեղ կատարվում են փորձարկումներ, պետք է պահպանվի 20°-ից մինչև 30° C-ի տիրույթում կամ արտադրող կազմակերպության համաձայնության դեպքերում՝ ավելի բարձր ջերմաստիճանում,

10) ամրության փորձարկումները կատարում են առանց ընդմիջումների, հետևյալ ցուցումներին համապատասխան՝

ա) արագությունը զրոյից մինչև արագության փորձարկման սկիզբը հասցնելու ժամկետը կազմում է 10 րոպ.,

բ) արագության փորձարկման սկիզբը պետք է սահմանել դողերի տվյալ տիպի համար նախատեսված առավելագույն արագությունը՝ մինուս 40 կմ/ժ-ը, եթե օգտագործվում է (1,70±1%) մ տրամագծով հարթ թափանիվ, կամ մինուս 30 կմ/ժ-ը, եթե օգտագործվում է (2±1%) մ տրամագծով հարթ թափանիվ,

գ) արագության ավելացման աստիճանը՝ 10 կմ/ժ,

դ) արագության յուրաքանչյուր աստիճանի փորձարկման տևողությունը՝ բացառությամբ վերջին աստիճանինը՝ 10 րոպ.,

ե) վերջին աստիճանի վրա արագության փորձարկման տևողությունը՝ 20 րոպ.,

զ) առավելագույն արագության փորձարկման ժամանակ պետք է սահմանել դողերի տվյալ տիպի համար նախատեսված առավելագույն արագության մինուս 10 կմ/ժ-ը, եթե օգտագործվում է (1,70±1%) մ տրամագծով հարթ թափանիվ, կամ կանոնակարգված առավելագույն արագությանը հավասար, եթե օգտագործվում է (2±1%) մ տրամագծով հարթ թափանիվ,

է) 300 կմ/ժ (V) առավելագույն արագության համար նախատեսված դողերի համար արագության առաջին աստիճանի փորձարկման տևողությունը կազմում է 20 րոպ., իսկ արագության վերջին աստիճանի համար՝ 10 րոպ.,

11) եթե իրականացնում են 300 կմ/ժ-ից ավելի արագության համար պիտանի ավելի բարձր աշխատանքային բնութագրերի տիպի դողերի գնահատման համար երկրորդ փորձարկումը, ապա փորձարկման ժամանակ կատարում են հետևյալ գործողությունները՝

ա) փորձարկման առանցքին տալիս են դողեր արտադրող կազմակերպության կողմից տրված առավելագույն արագությանը վերաբերող առավելագույն բեռնվածության 80%-ին հավասար բեռնվածություն,

բ) փորձարկումները կատարում են առանց ընդմիջման, 10 րոպ.-ի ընթացքում դողի պտտման արագությունը հասցնում են զրոյից մինչև դողեր արտադրող կազմակերպության կողմից տեխնիկական նկարագրում նշված առավելագույն արագությունը, այնուհետև 5 րոպ.-ի ընթացքում պահում են փորձարկումը՝ առավելագույն արագությամբ:

58. Արագությունից և բեռնվածությունից կախված՝ բեռնատար ավտոմեքենաների դողերի ամրության փորձարկումները՝

1) նոր դողերը տեղադրում են արտադրող կազմակերպության կողմից դողերի տիպերի

պաշտոնական հաստատման ժամանակ ներկայացված փորձարկման անվահեցի վրա,

2) օդախցիկով դողերի փորձարկման ժամանակ օգտագործում են նոր օդախցիկ՝ օդախցիկի, փականի և անվահեցի գոտու լրակազմով (անհրաժեշտության դեպքում),

3) փչում են դողը մինչև արտադրող կազմակերպության կողմից դողերի տեխնիկական նկարագրում տրված ճնշման ինդեքսին համապատասխանող ճնշում: Ճնշման ինդեքսի և ճնշման արժեքի միջև հարաբերակցությունը տրված է 26-րդ աղյուսակում.

Աղյուսակ 26

ՃՆՇՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ԵՎ ՃՆՇՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ճնշման ինդեքսը (PSI)	Ճնշումը		Ճնշման ինդեքսը (PSI)	Ճնշումը	
	բար			բար	
20	1,4	20	90	6,2	90
25	1,7	25	95	6,6	95
30	2,1	30	100	6,9	100
35	2,4	35	105	7,2	105
40	2,8	40	110	7,6	110
45	3,1	45	115	7,9	115
50	3,4	50	120	8,3	120
55	3,8	55	125	8,6	125
60	4,1	60	130	9,0	130
65	4,5	65	135	9,3	135
70	4,8	70	140	9,7	140
75	5,2	75	145	10,0	145
80	5,5	80	150	10,3	1030
85	5,9	85			

4) անվահեցի վրա տեղադրված դողերը, 3 ժ-ից ոչ պակաս, պահում են սենյակային ջերմաստիճանում, որտեղ կատարվել են փորձարկումները,

5) ճնշումը դողում հասցնում են մինչև սույն կետի 3-րդ ենթակետով նշված արժեքը,

6) անվահեցի վրա ամրացված դողերը տեղադրում են փորձարկման առանցքի վրա և սեղմում են այն ($1,70 \pm 1\%$) մ տրամագծով արտաքին հարթ մակերևույթով փորձարկման թափանիվին, որի մակերևույթն ունի ամենապակասն այնպիսի լայնություն, ինչպիսին դողերի պահպանաշերտի լայնությունն է,

7) փորձարկման առանցքին հաջորդականությամբ տալիս են փորձարկումների բեռնվածությունները, որոնք հավասար են սույն տեխնիկական կանոնակարգի 15-րդ աղյուսակում տրված կրող ունակության ինդեքսների դիմաց նշված բեռնվածության որոշակի տոկոսային մասին: Եթե դողերի կողամասերի վրա նշված են մեկ և կրկնակի դողերի կրող ունակության ինդեքսները, ապա որպես փորձարկման բեռնվածության ելակետային ընտրում են մեկ դողի համար նախատեսված արժեքը,

ա) 121 և ցածր կրող բեռնվածության ինդեքսով և P արագության կատեգորիայից բարձր դողերի

համար ընտրում են 59-րդ կետով սահմանված փորձարկման ընթացակարգերը,

բ) մնացած դողերի բոլոր տիպերի համար ամրության փորձարկումների ընթացակարգերը տրված են 27-րդ աղյուսակում.

Աղյուսակ 27

ԴՈՂԵՐԻ ԲՈՒՆՈՐ ՏԻՊԵՐԻ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ 121 ԵՎ ՑԱԾՐ ԿՐՈՂ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ Ք ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՑ ԲԱՐՁՐ ԴՈՂԵՐԻՑ, ԱՄՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Բեռնվածության ինդեքսը	Դողերի արագության կատեգորիան	Փորձարկման թափանիվի արագությունը		Թափանիվին տրվող բեռնվածությունը համապատասխան բեռնվածության ինդեքսին, %		
		շառավղային կառուցվածքի, րոպ ⁻¹	անկյունագծային կառուցվածքի, րոպ ⁻¹	7 ժ	16 ժ	24 ժ
122 և բարձր	F	100	100	66	84	101
	G	125	100			
	J	150	125			
	K	175	150			
	L	200	-			
	M	225	-			
121 և ցածր	F	100	100	70 (4 ժ)	88 (6 ժ)	106
	G	125	125			
	J	150	150			
	K	175	175			
	L	200	175			
	M	250	200			
	N	275	-			
	P	300	-			

գ) Հատուկ նշանակության դողերը փորձարկվում են սույն տեխնիկական կանոնակարգի 27-րդ աղյուսակում տրված սովորական տիպին համարժեք դողերի համար նախատեսված 85%-ը կազմող արժեքի արագության պայմաններում,

8) փորձարկումների ընթացքում դողերում ճնշումը չպետք է կարգավորվի, և փորձարկման բեռնվածությունը պետք է մնա անփոփոխ,

9) փորձարկումների ժամանակ սենյակային ջերմաստիճանը, որտեղ կատարվում են փորձարկումները, պետք է պահպանել 20°-ից մինչև 30°C-ի տիրույթում կամ արտադրող կազմակերպության համաձայնության դեպքում ավելի բարձր ջերմաստիճանում,

10) ամրության փորձարկումները կատարում են առանց ընդմիջումների:

59. 121 և ցածր կրող ունակության ինդեքսով ու Q և բարձր արագության կատեգորիայով բեռնատար ավտոմեքենաների դողերի համար ամրության փորձարկումների ընթացակարգերը՝

1) սահմանում են դողերի բեռնվածությունը տոկոսներով՝ կախված կրող ունակության ինդեքսին համապատասխանող բեռնվածությունից,

ա) $(1,70 \pm 1\%)$ մ տրամագծով փորձարկման թափանիվի վրա փորձարկումների դեպքում՝ 90%,

բ) $(2,00 \pm 1\%)$ մ տրամագծով փորձարկման թափանիվի վրա փորձարկման դեպքում՝ 92%,

2) փորձարկման ժամանակ սկիզբը սահմանում են արագության կատեգորիայի նշագրին համապատասխան՝ մինուս 20 կմ/ժ արագությունը.

ա) սկզբնական արագությանը հասնելու ժամկետը՝ 10 րոպ.,

բ) առաջին փուլի ժամկետը՝ 10 րոպ.,

3) փորձարկման համար սահմանում են արագության կատեգորիայի նշագրին համապատասխան՝ մինուս 10 կմ/ժ երկրորդ արագությունը՝ առաջին փուլի ժամկետը սահմանելով 10 րոպ.,

4) փորձարկման վերջնական արագությունը պետք է համապատասխանի արագության կատեգորիայի նշագրում տրված արագությանը՝ փորձարկման վերջին փուլի ժամկետը սահմանելով 30 րոպ.,

5) փորձարկման ընդհանուր ժամանակը՝ 1 ժ:

60. Դողը համարվում է ամրության փորձարկումներին դիմացած, եթե պահպանաշերտի վրա չեն նկատվում ռետինե կտորների պոկում, հենքի ճեղքում և շերտերի շերտատում, պահպանաշերտի շերտատում՝ բացառությամբ V արագության նշագրով մարդատար ավտոմեքենաների դողերի, որոնց վրա համապատասխան փորձարկումներից հետո նկատվում է մասնակի շերտատում՝ կախված որոշակի փորձարկման պայմաններից, դրանք նույնպես համարվում են փորձարկմանը դիմացած:

61. Արագության և բեռնվածության նկատմամբ ամրության փորձարկումներից 6 ժ հետո դողերի արտաքին տրամագիծը չպետք է լինի մինչև փորձարկումը չափված արտաքին տրամագծից՝ $\pm 3,5\%$ -ից ավելի:

62. Երբ պահանջվում է 56-րդ կետում նախատեսված արագության և բեռնվածության արժեքների համար բեռնատար ավտոմեքենաների դողերի տիպի պաշտոնական հաստատում, որոնք տարբերվում են սույն տեխնիկական կանոնակարգի 22-րդ աղյուսակում տրված անվանականներից, ապա ամրության փորձարկումների կատարումը պարտադիր չէ:

63. Եթե պաշտոնական հաստատման ներկայացվում են բեռնատար ավտոմեքենաների դողերի տիպեր, որոնց վրա նշված են բեռնվածության և արագության արժեքների համակցությունը՝ որպես արագությունից կախված բեռնվածության փոփոխություն, ինչպես դրանք նշված են 22-րդ աղյուսակում, ապա ամրության որոշումը՝ ըստ 56-րդ կետի, կատարում են նաև նույն տիպի երկրորդ դողի համար՝ բեռնվածության և արագության լրացուցիչ համակցության պայմաններում:

64. Մարդատար ավտոմեքենաների դողերի վրա, առանձին դեպքերում, պետք է լինի վեց լայնական շարքերի մաշվածության ցուցիչ՝ դասավորված պահպանաշերտի հիմնական ակոսներում մեկը մյուսի հանդեպ մոտավորապես հավասար հեռավորությամբ: Այդ մաշվածության ցուցիչները պետք է լինեն այնպիսին, որ դրանք հնարավոր չլինի խառնել պահպանաշերտի կողերի կամ բլոկների միջև ռետինե միջնապատերի հետ:

12 դյույմից ոչ ավելի անվանական տրամագծով անվահեցերի վրա տեղադրման համար պիտանի չափերով դողերի համար թույլատրվում է պահպանաշերտի մաշվածության ցուցիչների չորս շարք:

65. Պահպանաշերտի մաշվածության ցուցիչները պետք է ծառայեն՝ մինչև մարդատար ավտոմեքենաների համար 1,6^{+0,6} բարձրության ճշտությամբ, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը՝ 1,6^{+0,5}, որը որոշվում է այն պահին, երբ պահպանաշերտի ակոսների խորությունը չի գերազանցում 1,6 մմ-ն:

66. Պահպանաշերտի մաշվածության ցուցիչի բարձրությունը որոշում են պահպանաշերտի մակերևույթի կողմից մաշվածության ցուցիչի վերին կետում պահպանաշերտի խորության և պահպանաշերտի հիմքում կողմասերին մոտ պահպանաշերտի խորքի տարբերության չափմամբ:

Մաշվածության ցուցիչի բարձրությունը կարող է որոշվել նաև «Օդաճնշական դողեր՝ մարդատար մեքենաների ու դրանց կցանքների, թեթև բեռնատար մեքենաների և հատուկ փոքր տարողության ավտոմեքենաների համար. Տեխնիկական պայմաններ» ԳՕՍՏ 4754 և «Օդաճնշական դողեր՝ բեռնատար ավտոմեքենաների և դրանց կցանքների, ավտոբուսների և տրոլեյբուսների համար. Տեխնիկական պայմաններ» ԳՕՍՏ 5513 ստանդարտներով սահմանված մեթոդներով:

III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

67. Հայաստանի Հանրապետության տարածքում դողերի իրացումը, առանց համապատասխանության հավաստման, արգելվում է:

68. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա և շրջանառության մեջ գտնվող դողերը պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով:

IV. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

69. Մույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին՝ դողերի համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը կամ մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ունենան Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» N 1170-Ն որոշմամբ սահմանված համապատասխանության հավաստման 2 հ-4 հ հայտարարագրման սխեմաներից որևէ մեկով հավաստված համապատասխանության հայտարարագրի կամ 1 ս-6 ս սերտիֆիկացման սխեմաներից որևէ մեկով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ:

70. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը դողերի տեխնիկական և ապրանքաուղեկցող փաստաթղթերում կարող է նշվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը սահմանելու մասին» N 1281-Ն որոշմամբ սահմանված ձևի համապատասխանության նշանը:

71. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով դողերի նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ՝ ընտրելով տվյալ խմբաքանակում ընդգրկված յուրաքանչյուր դողի չափի նշագրից մեկ դող:

72. Սերտիֆիկացման մարմինը նույնականացման գործընթացում ստուգում է դողերի կողմասերում տրված մակնշվածքների համապատասխանությունը, այդ թվում՝ տիպի պաշտոնական հաստատման նշանի առկայությունը և դրանց համապատասխանությունը ուղեկցող

փաստաթղթերում նշվածներին՝ ղեկավարվելով սույն տեխնիկական կանոնակարգի 43-47-րդ կետերով սահմանված պահանջներով:

73. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված մեթոդներին համապատասխան:

74. Սերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացումն իրականացվել է համապատասխանության հավաստման 2 ս, 3 ս, 4 ս կամ 5 ս սխեմայով:

75. Համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ իրականացված համապատասխանության հավաստման սխեմայի՝

- ա) 1 ս սխեմայի դեպքում՝ 6 ամիս,
- բ) 2 հ կամ 2 ս սխեմայի դեպքում՝ 12 ամիս,
- գ) 3 հ, 4 հ, 3 ս կամ 6 ս սխեմայի դեպքում՝ 24 ամիս,
- դ) 4 ս կամ 5 ս սխեմայի դեպքում՝ 36 ամիս:

76. «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացված դոդերի համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ սույն տեխնիկական կանոնակարգի 73-րդ կետում նշված պայմանագրով սահմանված ժամկետներում:

77. «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի պահպանել իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ այն կասեցնել, կամ դադարեցնել:

Համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը դրա մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին և գրավոր ծանուցում է ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին:

V. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

78. Դոդերի չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:


VI. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

79. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին դոդերի համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

26



Նկար. Օդանշական դրոշի կառուցվածքը